ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՇՀԾՁԲ-15/19 (ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/14)»

ք. Երևան «17» «03» 2017թ.

ՀՀ բնապահպանության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի ժ/պ Հ.Հովհաննիսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և և «Հակվա» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Հակոբյանի, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է սույն պայմանագրի Հավելված №1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին կամ մատուցել է անպատշաճ որակի ծառայություն,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Սույն պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված №3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №3.1): Սույն կետով նախատեսված պայմանի խախտումը համարվում է ծառայությունների մատուցման ժամկետի խախտում:

3.2. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **535 000 (հինգ հարյուր երեսունհինգ հազար)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի Հավելված №2-ով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ 2017 թվականի դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրի Հավելված №1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ

չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5. Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.8. Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի հավելվածներ 1; 2; 3 և 3.1 հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10. Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	***ԿԱՏԱՐՈՂ***
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Հակվա» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք. Երևան, Շինարարների 15/2, բն.38
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
ՀՀ 900011007854	ՀՀ 16047032188800
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 00882409
ՀՀ բնապահպանության նախարարության	«Հակվա» ՍՊԸ-ի
աշխատակազմի ղեկավարի ժ/պ	տնօրեն
Հ.Հովհաննիսյան	***Ա.Հակոբյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված №1
«17» «03» 2017թ. կնքված
№ՇՀԾՁԲ-15/19 (ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/14) պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Հակվա» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք. Երևան, Շինարարների 15/2, բն.38
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
ՀՀ 900011007854	ՀՀ 16047032188800
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 00882409
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ	«Հակվա» ՍՊԸ-ի տնօրեն
Հ.Հովհաննիսյան	**Ա.Հակոբյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. Գնման առարկան՝ ծառայության անվանումը	**Ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայություններ**
2. Գնման առարկայի՝ ծառայության մանրամասն նկարագիրը	Գործողությունների հաջորդականությունը՝ 1. Ավտոմեքենայի թափքի արտաքին լվացման եղանակը՝ բարձր և ցածր ճնշման ջրի փոշիացման սարքերի միջոցով, առանց հպման (ոչ խոզանակային), ավտոմեքենաների լվացման համար նախատեսված հատուկ նյութերով և հեղուկներով, 2. Ավտոմեքենայի թափքի արտաքինը պետք է մաքրվի օգտագործված բոլոր նյութերից և հեղուկներից՝ բարձր ճնշմամբ փոշիացված ջրով, 3. Ավտոմեքենայի թափքի արտաքին փայլեցում նախատեսված հատուկ նյութերով և հեղուկներով, 4. Ավտոմեքենայի ապակիների մաքրումը և լվացումը նախատեսված հատուկ նյութերով, հեղուկներով և ջրով, ցածր ճնշման տակ, ապակիներից բոլոր միներալ նյութերի մաքրում՝ չորացումից հետո առանց նստվածքների, 5. Ավտոմեքենայի սրահի և բեռնախցիկի մաքրումը՝ ավտոմեքենաների սրահի մաքրման համար նախատեսված հատուկ մաքրող և փայլեցնող նյութերով և միջոցներով, 6. Սրահի գորգերի խոզանակով մաքրում կամ ռետինե գորգերի լվացում, 7. Կաշեպատ ավտոմեքենաների նստատեղերի մշակում նախատեսված հատուկ նյութերով, 8. Շարժիչի արտաքին և հարակից սարքավորումների լվացում (Պատվիրատուի ներկայացուցչի պահանջով):
3. Գնման առարկայի՝ ծառայությունը մատուցողին ներկայացվող և անհրաժեշտ պահանջները կամ պայմանները	1. Ավտոլվացման կայանը պետք է գտնվի ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք, ՀՀ բնապահպանության նախարարություն հասցեից մինչև 500 մետր հեռավորության վրա: 2. Ավտոլվացման կայանը պետք է ունենա մինչև 5 մեքենայի համար նախատեսված անվճար կայանատեղի: 3. Ավտոլվացման կայանի աշխատանքային ժամերը՝ 07:00-22:00: 4. Մեկ ավտոմեքենայի լվացման ծառայության մատուցման առավելագույն տևողությունը 40 րոպե: 5. Ծառայությունների մատուցման նպատակով լվացման կտրոնների տրամադրում՝ մեկ կտրոնը մեկ ավտոմեքնայի ամբողջական լվացման (առանց շարժիչի արտաքին և հարակից սարքավորումների լվացման) կամ շարժիչի արտաքին և հարակից սարքավորումների լվացման համար: 6. Մեկ ավտոմեքենայի համար ծառայության մատուցման սկիզբը Պատվիրատուի ներկայացուցչի բանավոր պահանջից 40 րոպեի ընթացքում:
4. Ծառայության քանակական ցուցանիշները	Ավտոլվացումների քանակը՝ 275
5. Ծառայության մատուցման սկիզբը	Պայմանագրի կնքման օրը
6. Ծառայության մատուցման ավարտը	«20» «դեկտեմբերի» 2017թ.

Հավելված №2
«17» «03» 2017թ. կնքված
№ՇՀԾՁԲ-15/19 (ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/14) պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ բնապահպանության նախարարություն
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011007854
ՀՎՀՀ 02507198
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավարի ժ/պ
Հ.Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հակվա» ՍՊԸ
ք. Երևան, Շինարարների 15/2, բն.38
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
ՀՀ 16047032188800
ՀՎՀՀ 00882409
«Հակվա» ՍՊԸ-ի
տնօրեն
Ա.Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեից, ընդ որում՝ (ըստ ամիսների աճողական կարգով)												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայություններ	-	-	97 273	272 364	272 364	272 364	408 546	408 546	408 546	535 000	535 000	535 000	**535 000**

Հավելված №3
«17» «03» 2017թ. կնքված
№ՇՀԾՁԲ-15/19 (ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/14) պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ բնապահպանության նախարարություն
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011007854
ՀՎՀՀ 02507198

ԿԱՏԱՐՈՂ
ք. Երևան, Շինարարների 15/2, բն.38
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
ՀՀ 16047032188800
ՀՎՀՀ 00882409

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2017 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «17» «03» 2017թ.
Պայմանագրի համարը՝ №ՇՀԾՁԲ-15/19 (ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/14)
Պատվիրատուն՝ ի դեմս ***ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության ֆինանսահաշվապահական և տնտեսական բաժնի պետ-գլխավոր հաշվապահ Լ.Սինանյանի****, և Պայմանագրի կողմն՝ ի դեմս* ***«Հակվա» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Հակոբյանի****, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված №3.1
«17» «03» 2017թ. կնքված
№ՇՀԾՁԲ-15/19 (ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/14) պայմանագրի

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Հակվա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև «17» «03» 2017 թվականին կնքված №ՇՀԾՁԲ-15/19 (ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/14) գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը «_____» «_____» 2017 թվականին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց** հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
_____	_____
ստորագրություն	ստորագրություն